ման հիշատակել է նաև ֆրանսիացի Հանրրսին իր ֆրանսերեն ցանկում, բայց Զարբհանալյանը դա ևս համարել է թյուրիմացություն և մարսելյան տպագրությունների իր ցուցակի մեջ չի մտցրել այդ Սաղմոսարանը որպես գոյություն չունեցող։ Մինչդեռ մեր ձեռքի տակ եղածը հենց այդ Սաղմոսարանն է, որի տպագրությունը, ինչպես խմանում ենք հիշատակարանից, իրոք Ոսկանի օրոք է սկսվել (1673 թ.) և նրա մահից հետո ավարտվել (1674-ի նոյեմբերի 10)։ Զարբհանալյանին ուղղակի անծանոթ է եղել այս Սաղմոսարանը և նա ենթադրել է, թե օտար հեղինակը այն շփոթել է անավարտ Նարեկի հետ, որը նույնպես գոյություն ունի, բայց Ոսկանի մահից հետո էլ չի ավարտվել։ Այսպիսով Ոսկանը երեք գրքի տպագրություն է կիսատ թողել իր ողբերգական մահով՝ Սաղմոսարան, Ժամագիրք և Նարեկ, առաջինը որպես դավանաբանական տեսակետից անխոցելի գիրք շարունակել է տպագրվել և շուտով ավարտվել է, երկրորդը՝ մի քանի անգամ կաթոլիկական գրաքննության է ենթարկվել, փոփոխվել և մեծ դժվարությունից հետո 1679-ին լույս տեսել, երրորդի տպագրությունը բոլորովին չի շարունակվել։



Նկ. 3. 1673—1674 թվականներին Մարսելում տպագրված Սաղմոսարանը



Նկ. 4. 1714-ին Ղուկաս Վանանդեցու կողմից տպագրված Գարգատոմարի անվանաթերթը

Նկարագրված այս Սաղմոսարանի մեջ չափազանց հետաքրքրական է հիշատակարանը, որը, որքան մեզ հայտնի է, բանասիրության մեջ օգտագործված չէ և ոչ էլ հրապարակված։ Այդ հիշատակարանը մի անփոխարինելի փաստաթուղթ է ոսկանյան տպագրության և առհասարակ ողջ հայ տպագրության պատմության համար։ Ոսկանի քեռորդի Սողոմոն Լևոնյանի կողմից գրված ու տպագրված այդ վավերագիրը հրաշալի կերպով ցույց է տալիս, թե որքան դժվարին, անտանելի պայմաններում են Եվրոպայում գործող